վինի ընդ մեզ, և մեք ընդ նոսա հաշտելոց եմք յաւուրս։

Եւ ի գիշերիս յայսմ, որ Շաբաթ (22 Մարտ) լուսանայր, գտին զԱալէհ աղան եւ զՄուստաֆա աղան եւս, զնոսին խեզդամահ արարեալ ձգեցին ի յԱթմէյտանին, և յետ պահու առաւօտիս վերուցին։

Եւ օրս մօհրն եկաւ, որ գնացեալ էր ի Տէլի Հիւսէին փաշան, և որ աղմուկս եղև և եղին զՍիաւուշն և մարդ ուղարկեցին մօհրին և հասաւ ի ճանապարհին և օրս բերաւ և տվին ի Սիաւուշն։

Եւ օրս Էսիլն և օրթախն խորհուրդ արարեալ թէ Ահա հաշտեցաք հետ վարդապետին, և այնպէս համբաւէին ժողովրդեանն, և այժմ երթիցուք ի Մարտիրոս վարդապետն, մինթէ եւս զնա պատրեալ առցուք ի բերանէ ինչ թէ Գնացէ՛ք՝ թողութիւն. և այնուհետեւ այլ ոչ ունիմք[1]) ի հոգս. եւ կացուցին բարեխօս զԵրուսաղէմայ Ստեփաննոսն. եւ երթեալ անդ, եւ նա ոչ թողու յերեսս իւր ելանել։ Եւ կրկին անգամ դիմեալ ի դուռն՝ իբր երթալով ի ներս, և նա ևս ոչ թողեալ մտանել ի ներս, այսպէս Գ և Դ անգամ դիմեալք՝ թէ մտանեմք. եւ վարդապետն ի ներքուստ ձայնեալ թէ Մի՛ գայք պղծեր, եւ այլ անարգանս. և յետոյ ճար ոչ գտեալ վարդապետին՝ ի բարկութիւն չարժեալ, ելեալ ի դուրս անարգելով և ի վերայ նոցա վազելով. եւ նոքա զայն տեսեալ և զձայնն՝ ի փախուստ առեալ հազիւ զդուռն արտաքոյ գտեալ գնացին։ Առաւօտուս քարոզ ասաց Վարդապետն զԼուսաւորչին և կէսն երեկոյիս ասաց։ Եւ զմնացեալն առաւօտուն և երեկոյիս զխորհուրդ Կիրակէիս (23 Մարտ) ասաց և զդաս կարգին։

Բշի օր ԻԴ-իս երեկոյիս (ըմբռնեցին) զՄէմար

1) ունիմ.